



ՀՀ-ՈՒՄ ՄՇԱԿՎՈՂ
ՏԱՆՁԵՆՈՒ ՍՈՐՏԵՐ



Տանձենին ամենաարժեքավոր պտղատու տեսակներից մեկն է և հնդավորների մեջ իր նշանակությամբ, խնձորենուց հետո, գրավում է երկրորդ տեղը: Նրա լավագույն սորտերի պտուղներն այժմ են ընկնում նուրբ, հալվող, բուրավետ պտղամսով, օգտագործվում են թե՛ թարմ, թե՛ վերամշակված վիճակում: Նրանցից պատրաստում են մուրաբաներ, ցուկատներ, կոմպոտներ, գինի, ոչ ալկոհոլային խմիչքներ, պովիլոլ, դշաք, առանձնապես բարձր է գնահատվում նուրբ սորտերի պտուղներից պատրաստված չիրը:

Հայաստանում տանձենու սորտային կազմը մեծ կախում ունի գոտիների կլիմայական ու հողային պայմաններից: Տանձենին ավելի քիչ ցրտադիմացկուն է, քան խնձորենին: Նրա լավագույն սորտերը ավելի շատ ջերմության գումար են պահանջում, այդ պատճառով նրա տարածման արեալը, մասնավոր լավագույն ձմեռային սորտերի համար, անցնում է խնձորենու տարածման սահմաններից ավելի հարավ:

Հայաստանում տանձենի մշակվում է բոլոր մարզերում, ավելի մեծ քանակով մշակվում է Արարատի, Կոտայքի, Լոռու, Գեղարքունիքի և Վայոց Ձորի մարզերում: Դեռ խորհրդային տարիներից մշակվել են և տեղական, և սերմուծված լավագույն սորտերը, որոնք այսօր էլ համարվում են տանձենու բարձրարժեք սորտեր: Քանի որ այս սորտերը հիմնականում ուշ են պտղաբերում՝ 6-8 տարի հետո, վաղ բերքատվության անցնելու համար պատվաստում են սերկևիլի կամ գաճաճ պատվաստակալների վրա:

Սույն ձեռնարկի նպատակն է տանձենու մշակությամբ զբաղվող ֆերմերներին ծանոթացնել Հայաստանում տարածված տանձենու աշխատային և ձմեռային արժեքավոր սորտերին և դրանց մշակության առանձնահատկություններին:

Նյութը վերամշակված է «Հայաստանի պտուղները», «Հայաստան» հրատարակչության 1973թ-ին հրատարակված աշխատության երրորդ հատորից:


Շեն ԲԳԿ-ն նախաձեռնել է սույն գրքույկի տպագրությունը
ԲԳ-ում պտղաբուծության խթանման և ֆերմերների գիտելիքների
ավելացման նպատակով

Գրքույկը կազմել է
Շեն ԲԳԿ խորհրդատվական խումբը
Վ. Մաթևոսյան, Ն. Շահմուրադյան

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԳԵՂԵՑԿՈՒՅԻ

Սորտը ստեղծվել է Բելգիայում: Մշակվում է Արևմտյան Եվրոպայում, Հյուսիսային Ամերիկայում և այլ երկրներում: Ռուսաստանում տարածված է հարավային մասերում: Հայաստանում տարածված է տանձենու մշակության բոլոր շրջաններում:

Ծառերը խոշոր են, երբեմն միջակ մեծության: Պսակը լայն քրզածն է, նոսր տերևակալած, կմախքային ճյուղերը ցողունի հետ կազմում են մեծ անկյուններ, երկար են, հաստ, լայն տարածված, քիչ կախված: Կեղևը հարթ է, մոխրագույն: Միամյա շիվերը քիչ աղեղնաձև, հարթ, կարմրադարչնագույն, մանր սպիտակավուն ոսպնյակներով, թույլ թավոտ: Տերևները միջակ մեծության են



կամ ավելի փոքր, երկարավուն ձվաձև, կարճ, սրածայր գագաթով, մանր սղոցատամնավոր եզրերով, հարթ, հաստ, փայլուն, մուգ կանաչ: Աճման սկզբում տերևները լինում են դեղնականաչ, վարդագույն երանգով, աշնանը՝ գորշ դեղին, կարմրավուն կամ մուգ մանուշակագույն: Ծաղիկները լինում են միջակ մեծության են, կոնաձև, դարչնագույն: Ծաղիկները լինում են ծաղկաբույլերում 6-8 հատ: Պսակաթերթիկները սպիտակ են, կլոր, գոգավոր, շատ նեղացած հիմքով, միմյանցից հեռու դասավորված:

Պտուղները խոշոր են կամ միջակ, 150-350գ, գաճաճ պատվաստակալների վրա ավելի խոշոր բույս ձվաձև: Մաշկը բարակ կամ միջակ հաստության է, հարթ, փայլուն, հավաքելիս կանաչ, արևի կողմից՝ գորշ կարմիր թշով, երբեմն ամբողջովին կարմիր: Հասունանալիս դառնում է դեղին կամ ոսկեգույն դեղին, վառ կարմիր թշով, միջակ ժանգապատ: Մաշկն ունի հաճելի մուսկատի բուրմունք, որը զգացվում է լրիվ հասունացման ժամանակ: Պտղամիսը սպիտակ-դեղնավուն է, շատ նուրբ, հալվող, զինեքաղցր, շատ դուրեկան համով և բուրմունքով, դեներտային գերազանց որակով:

Ծառերը բավականին ցրտադիմացկուն են, երկարակյաց, ապրում են մինչև 100 տարի և ավելի, քիչ պահանջկոտ են հողի նկատմամբ, լավ աճում, պտղաբերում են ոչ շատ խոնավ, հարուստ և փուխր հողերում: Ռոռզման դեպքում վատ չեն զգում նաև չոր, ավելի աղքատ ու ավազոտ հողերում: Տերևները չեն վնասվում բարձր ջերմաստիճանից և օդի չորություներից: Լավ են աճում նաև սերկևիլի վրա պատվաստելիս: Սակայն նախ աճում են թույլ, իսկ հետո, մինչև վեգետացիայի վերջը, լավ միամյակներ են դառնում: Բերքատվությունը բարձր է, ոչ ուժեղ պարբերականությամբ: Լրիվ բերքատվության շրջանում մեկ ծառի բերքը լինում է 150-200կգ, բարենպաստ պայմաններում 400կգ և ավելի:

Պտուղները թույլ են կպած ծառին և օդի խոնավության ցածր լինելու, ինչպես նաև բամբակի դեպքում թափվում են: Ամիրածեշտ է կանոնավոր ետի միջոցով թույլ չտալ որպեսզի ճյուղերը շատ երկարեն և բամբակներից ուժեղ տարուբերվեն, բերքահավաքը պետք է կատարել ժամանակին:

Պտուղներին ուժեղ վնասում է պտղակերը, իսկ նոր կազմակերպված պտուղներին՝ սղոցողը: Խոնավ շրջաններում խիստ վարակվում է բոսով:

ԲԵՐԵ ԿԼԵՐԺՈՒ

Սորտը ստեղծել է Մ. Պ. Կլերժոն, 1838թ-ին Ֆրանսիայի Նանտե բաղաբույս: Մշակվում է Արևմտյան Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում: Շատ վաղուց մշակվում է Ղրիմում և Կովկասում: Հայաստանում մշակվում է Հյուսիս-արևելյան, Լոռի Փամբակի գոտիներում և Սյունիքի մարզում:

Ծառերը միջակ մեծության կամ ավելի փոքր են՝ 3,5 - 4,5մ բարձրությամբ, գաճաճ պատվաստակալների վրա շատ ավելի փոքր, նեղ, բրգաձև ու կոնվալստ պսակով: Բունը միջակ հաստության է, գորշ մոխրագույն, խոշոր, գորշ ոսպնյակներով, կլավոր: Կմախքային ճյուղերը հիմնական ցողունի հետ ամուր ներաճում և կազմում են սուր անկյուններ, նախ բարձրանում, ապա տարածվում են: Միամյա շիվերը ուղիղ են, հարթ, դեղնակարմիր, վերջավորվում են թուփ բողբոջով, որից բերքատվության տարիներին միշտ պտուղ է կազմակերպվում: Տերևները միջակ մեծության են, փայլուն, երկարավուն ձվաձև, շատ մանր, հազիվ նշմարելի առամնավոր: Տերևի վերին մակերեսը բաց կանաչ է հարթ մակերեսով, ցածի մասը՝ թույլ ու նուրբ սպիտակ թավուտ: Ծաղկաբողբոջները միջակ են, կոնաձև, սրածայր, գորշ դարչնագույն: Ծաղիկները մեծ մասամբ 7-ական հատ են ծաղկաբույլերում: Պսակաթերթիկները միջակ մեծության են, ձվաձև, գոգավոր, սպիտակ, միմյանցից հեռու դասավորված:

Պտուղները խոշոր կամ շատ խոշոր են՝ 150-280գ բաշով, բարենպաստ պայմաններում շատ ավելի խոշոր, մինչև 400-800գ և ավել: Պտուղները բուր-տանձաձև են, միջակ պտուղները կոնաձև կամ կլոր-կոնաձև, կրթունի մոտ հաճախ մի կողմ թեթևած: Պտղակալը կարճ է, հաստ:

Մաշկը միջակ հաստության կամ հաստ է, նուրբ, հարթ, փայլուն, բաց կանաչ, հետո դառնում է ոսկեգույն դեղին, արևի կողմից՝ շատ գեղեցիկ նարնջակարմիր թշով, որը հաճախ պատում է մակերեսի մեծ մասը: Ամբողջ մակերեսը պատած է բազմաթիվ խոշոր ժանգակետերով, որը խոնավ վայրերում ու թույլ լուսավորման պայմաններում վերածվում է ժանգացանցի: Պտղամիսը դեղնավուն է, շատ նուրբ, շատ հյութալի ու բաղցր, հաճելի թթվությամբ և բուրմունքով, հրաշալի դեսերտային որակի: Աշնանային լավագույն սորտերից մեկն է:

Ծառերը երիտասարդ հասակում բավարար աճ ունեն, բայց թույլ են ճյուղավորվում և կարիք է լինում ուժեղ էտի: Բերքատվության շրջան անցնելուց հետո դանդաղ են աճում ու մեծ չափերի չեն հասնում: Սերկևիլի վրա շատ թույլ են աճում: Զանի որ ուժեղ պատվաստակալների վրա էլ չեն խոշորանում, ուստի կարիք չկա

սերկևիլի վրա պատվաստել: Արարատյան դաշտի պայմաններում պտղաբերության շրջան են անցնում շատ վաղ, նույնիսկ տնկարանում՝ միամյակների վրա հիմնադրվում են օղանիստեր և ծաղկաբողբոջներ և հաջորդ տարի գարնանը, տնկման ժամանակ առատ ծաղկում են: Պահանջկոտ են հողի նկատմամբ: Խոնավ վայրերում և խոր ենթաշերտ ունեցող հողերում աճը համեմատաբար ուժեղ է, բայց այդ դեպքում բերքատվությունն իջնում է: Չոր հողերում պտուղների որակը ցածր է լինում: Ցրտադիմացկուն են, բայց ավելի լավ են զգում արևոտ, բամբակներից պաշտպանված տեղերում: Պտուղներն ամուր են կպած ծառին, բայց խոշոր ու ծանր են, որի պատճառով թափվում են: Բերքատվությունը մեկ ծառից 80-100կգ, իսկ նպաստավոր պայմաններում 200կգ-ից ավելի է: Պտուղները ցածրադիր վայրերում հավաքում են օգոստոսի կեսերից մինչև սեպտեմբերի առաջին տասնօրյակը, իսկ ավելի բարձրադիր վայրերում՝ սեպտեմբերի երրորդ տասնօրյակին: Ուշ հավաքելու դեպքում պտուղների որակը վատանում է: Օգտագործման համար պիտանի են դառնում 20 - 30 օրից հետո և պահվում են մինչև նոյեմբեր - դեկտեմբեր: Փոխադրունակ են, լավ դիմանում են երկար ճանապարհներին, միայն խնամքով փաթեթավորման պայմաններում: Ծառերը և պտուղները դիմացկուն են հիվանդությունների և վնասատուների նկատմամբ:



ԼԵՌՆԱՅԻՆ ԳԵՂԵՑԿՈՒՅԻ

Սորտն ստեղծել է Պ.Գ. Կարանյանը: Շրջանացված է Շիրակի մարզում, Սևանի և Ապարան-Յրազդանի գոտիներում:

Ծառը գնդաձև պսակով է, խիտ ճյուղավորությամբ: Երկրորդական կարգի ճյուղերը բաժանվում են ուղիղ անկյան տակ: Երիտասարդ ծառերի բնի և ճյուղերի կեղևը միանգամայն հարթ է, բաց մոխրագույն: Պտղաբողբոջները սուր կոնաձև են, խոշոր:


Տերևները միջակ մեծության են, ձվաձև, ամբողջական եզրերով, բաց կանաչ, խիտ թավուտ:

Ծաղիկները 7-8-ական հատ են՝ ծաղկաբույլերում: Կոկոնները տափակ են: Պսակաթերթիկները կլորավուն են, դեպի վեր ծալված եզրերով, սպիտակ:

Պտուղը միջակ մեծության է, մինչև 140գ բաշտով, խոշոր պտուղները՝ 190-200գ, կլորավուն: Մաշկը շատ ամուր է, հարթ, ոսկեգույն, վառ կարմիր, մոմային փառով: Լուսավորված պտուղները միանգամայն կարմիր են: Ենթամաշկային կետերը բազմաթիվ են, մանր, գորշ դարչնագույն: Պտղամիսը սերուցքաասպիտակ է, կիսայուղային, բաղդրաթթվաչա, ուժեղ քուրմուկաբով, լավորակ:

Ծառերը շատ ցրտադիմացկուն են: Պտղաբերության են անցնում տնկելու 3-4-րդ տարում: Պտղաբերում են առատ ու ամեն տարի, հիմնականում օդանիստերի վրա: Պտուղների պահունակությունը երկու ամիս է:

Չիր պատրաստելու համար լավ հումք է:



ՅԵՂԻՆԵ

Սորտն ստեղծել է Պ.Գ. Կարանյանը: Շրջանացված է Շիրակի մարզում, Սևանի և Ապարան-Յրազդանի գոտիներում:

Ծառերը ճյուղատարած, լայն-կլորավուն ու խիտ պսակով են: Բնի կեղևը մասնատված է ճեղքվածքներով, մուգ մոխրագույն է, իսկ կմախքային ճյուղերինը հարթ է, բաց մոխրագույն: Պտղաբողբոջները խոշոր են, սուր կոնաձև, մուգ դարչնագույն, խիտ թավուտ:

Տերևները միջակ մեծության են, ձվաձև, սրված երկարավուն զազաթով և խոր սղոցավոր եզրերով, կաշեման, մուգ կանաչ, բացվելու սկզբին խիտ թավուտ:

Ծաղիկները 7-ական հատ են: Պսակաթերթիկները կլորավուն, գրգավոր, սպիտակ: Փոշանոթները բաց մանուշակագույն են:

Պտուղները խոշոր են, 270գ միջին կշռով, առանձին պտուղներ՝ 360գ, բուլթ-տանձաձև: Պտղակոթը կարճ է, բարակ, աղեղնաձև կորացած, պտղին ուռուցքով ամրացած: Մաշկն ամուր է, հարթ, ոսկեդեղին, աղոտ մուգ կարմիր թշով, որն զբաղեցնում է պտղի մակերեսի երկու երրորդը: Ենթամաշկային կետերը մանր են, կանաչ, խիտ դասավորված ժանգաբծերով, մոմային թույլ փայլով: Պտղամիսը սպիտակ է, կիսայուղային, մանրահատիկ, շատ հյութալի, բուրավետ, թթվաշաքարոց, լավ համով:

Ծառերը շատ ցրտադիմացկուն են, արագ աճող: Պտղաբերության են անցնում տնկելու 3-4-րդ տարում: Պտղաբերում են հիմնականում պտղաշիվերի վրա: Ապրանքային բերք ստացվում է 8-9 տարեկան ծառերից: Ամեն տարի ստացվում է առատ բերք: Սպառողական հասունացումը տեղի է ունենում ֆաղեուց 15-20 օր հետո, երբ պտուղները փոխում են իրենց գույնը: Սովորական պահեստներում պահվում է 60-65 օր:


Չիր պատրաստելու համար լավ հումք է:



ԲԵՐԵ ԲՈՍԵ

Պատահական սերմաբույս է, հայտնաբերվել է 18-րդ դարի վերջերին՝ Ֆրանսիայում: Տարածված է Եվրոպական բոլոր երկրներում, Հյուսիսային Ամերիկայում և Ռուսաստանի հարավում: Հայաստանում մշակվում է ցածրադիր ու Նախալեռնային բոլոր շրջաններում, ինչպես նաև Լեռնային շրջանների ավելի տաք ու պաշտպանված վայրերում:

Ճառը բավական խոշոր է: Պսակը լայն քրզած է, նոսր: Կմախքային ճյուղերի կեղևը անհարթ է, ճաքճված, կլավոդ, մոխրագույն: Ծիվերը միջակ հաստության ու երկարության են, հարթ, բաց դարձնագույն՝ սպիտակ, մանր



ոսպնյակներով: Տերևաբողբոջները ցցված են, կոնաձև, սրածայր, մուգ դարձնագույն:

Տերևները խոշոր են, ձվաձև, միանգամից սրացած ծայրով, շատ մանր սղոցատամնավոր կամ ամբողջական եզրերով, նուրբ, բաց կանաչ, իսկ աշնանը՝ կարմրամանուշակագույն:

Ճաղկաբողբոջները խոշոր են, սրածայր, կոնաձև, մուգ դարձնագույն:

Ճաղիկները խոշոր են, լայն բացված, մեծ մասամբ ծաղկաբույլերում 5-7 հատ: Պսակաթերթիկները երկարավուն են, հիմքում միանգամից նեղացած, գագաթը կլորավուն, սպիտակ:

Պտուղները խոշոր, շատ խոշոր կամ միջակ մեծության են 180-300գ քաշով, երկար տանձաձև: Պտղակոթը երկար է, միջակ հաստության, փայտացած, թույլ կորացած, գագաթում քիչ լայնացած: Երբեմն հիմքում, կոթունի մոտից պտղամիսը քիչ գերածած է: Մաշկը բարակ է, նուրբ, հավաքելիս բաց կանաչ, ամբողջովին պատած է ժանգաթներով ու մանր ժանգակետերով, որոնք խոնավ վայրերում ամբողջովին պատում են պտղի մակերեսը: Հայաստանի ցածրադիր, չոր ու արևաշատ վայրերում ժանգը շատ թույլ է արտահայտվում և հասունացած պտուղների մաշկը դառնում է ոսկեգույն և շատ գեղեցիկ: Պտղամիսը սպիտակադեղնավուն է, շատ նուրբ, հավլոդ, շատ հյութալի, բաղդր, դուրեկան թթվությամբ, նշի հաճելի բուրմունքով, բարձր դեներտային որակով:

Ճառերը ցրտադիմացկուն չեն, հատկապես վաղ ու խիստ ցրտերի պայմաններում: Պահանջկոտ չեն հողի նկատմամբ, բայց պահանջում են լավ խնամք, խոնավ հողեր կամ ոռոգում: Սերկնիլի հետ լավ չեն սերտաճում, պահանջվում է միջանկյալ պատվաստակալ: Բերքատվության շրջան են անցնում 5-7-րդ տարում և լավ ազդոտելնիկայի պայմաններում պտղաբերում առատ ու առանց պարբերականության. Հիմնականում՝ օդանիստերի վրա: Տերևները տուժում են օդի չորությունից և բարձր ջերմաստիճանից: Պտղաբերությունը պսակի կենտրոնական մասում պահպանելու և կմախքային ճյուղերը չմերկացնելու համար պետք է կատարել կարճ ետ: Պտուղները նստած են 1-2-ական հատ: Մեկ ծառի բերքը հասնում է մինչև 200-320կգ-ի: Պտուղները բավական ամուր են կպած ծառին: Համարվում է տանձի աշնանային լավագույն տրոտերից մեկը:

ԲԵՐԵ ՀԱՐԴԱՆՊՈՆ

Ստեղծվել է Բելգիայում, սելեկցիոներ Հարդանսպոնի կողմից: Տարածված է արևմտյան երկրներում և Ռուսաստանի հարավում: Հայաստանում լավ աճում և զարգանում է ցածրադիր և նախալեռնային շրջաններում:

Ճառը միջակ կամ խոշոր է, միջակ աճով: Պսակը բարձր է, բրգաձև, խիտ, վայրի տանձենու տեսքով: Բնի և կմախքային ճյուղերի կեղևը բաց դարչնականաչավուն է, հին կեղևը կլավում է, ճաքճքվում: Միամյա շիվերը թույլ աղեղնաձև, հարթ, շատ մանր ու նոսր սպիտակավուն ոսպնյակներով, թույլ թավոտ: Տերևաբողբոջները միջակ մեծության են, լայն կոնաձև, ցցված, թույլ թավոտ:

Տերևները միջակ կամ մանր են, կլորավուն-ձվաձև, շատ մանր ատամնավոր, այլբավոր եզրերով, հաստ, կանաչ, փայլուն, ներթևի կողմը մոխրականաչ, թույլ թավոտ, աշնանը ոսկեգույն դեղին:

Ծաղկաբողբոջները միջակ մեծության են, կոնաձև, թավոտ, մուգ դարչնագույն:

Ծաղիկները միջակ կամ մանր են, մեծ մասամբ 7-9 հատ ծաղկաբույլերում: Պսակաթերթիկները միջակ մեծության են, էլիպսաձև, հիմքում նեղացած, զոգավոր, սպիտակ:

Պտուղները խոշոր են, 150-400գ բաշով, գանգակատանձաձև, անհավասարակողմ: Պտղի ամբողջ երկարությամբ ձգված են լայն, պարզ արտահայտված կողեր: Պտղի մակերեսը գազաթուփ և որոշ չափով կոթունի մոտ խորրուբորդ է: Մաշկը հարթ է, շատ նուրբ կամ միջակ հաստության, փայլուն, հավաքելիս բաց կանաչ, բազմաթիվ մանր կանաչավուն կետերով: Պահելու ընթացքում դառնում է բաց դեղին, լավ լուսավորված պտուղներինը արևի կողմից աղյուսակարմիր: Պտղամիսը սպիտակ է, շատ նուրբ, հյութալի, հալվող, շատ հաճելի թթվությամբ ու բուրմունքով և յուրահատուկ հաճելի թույլ տոփայությամբ, գերազանց դեներտային հատկությամբ:

Ծառերը միջակ աճող են: Երիտասարդ հասակում զգայուն են ցրտերի նկատմամբ, իսկ հետագայում դիմացկուն են: Պահանջում են տաք, քիչ խոնավ հողեր, լավ խնամք, երկար էտ: Ջերմաստիճանի անբավարար գումարի և կարճ

վեգետացիայի շրջանի պայմաններում պտուղները մանրանում ու ցածրորակ են դառնում: Արարատյան դաշտի պայմաններում տերևները որոշ չափով արևահարվում են: Ծառերը ուշ են անցնում պտղաբերության շրջան: Ճատ լավ են զգում գաճաճ պատվաստակալների վրա և պտղաբերում են 3-4-րդ տարում: Պտղաբերում են մեծ մասամբ օղակախտերի վրա: Բերքատվությունը բարձր է, մեկ ծառից մինչև 300-400կգ: Բերքահավաքը կատարում են հոկտեմբերի կեսից ոչ շուտ, այլապես նրանք լավ որակ չեն ունենում և կնճոռտվում են: Սպառողական հասունացումը սովորաբար տեղի է ունենում դեկտեմբերին-հունվարին, պահվում են մինչև հունվարի վերջ: Փոխադրունակ են: Ուժեղ վնասվում են տանձենու սղոցողից և պտղակերից: Խոնավ պայմաններում վարակվում են քոսով:

Որակական ցուցանիշներով լավագույնն է Նույն ժամանակահատվածում հասունացող միջին ուշահաս սորտերի մեջ:



ՕԼԻՎՅԵ ԴԸ ՍԵՐՐ

Ստեղծվել է Ֆրանսիայում, 1847թ-ին: Տարածված է Արևմտյան Եվրոպայում: Փոքր ծավալով մշակվում է Դրիմի հարավային շրջաններում, Դաղստանում, Ուզբեկստանում: Հայաստանում շատ քիչ տարածում ունի: Հիմնականում հանդիպում է Արարատյան և Հյուսիս-արևելյան գոտիներում:

Ծառերը միջակ մեծության են: Պսակը լայն քրգածն է, կոնյակոտ: Բույնը միջակ հաստության է, հարթ, բաց դարչնամոխրագույն: Տերևաբողբոջները մանր են, կոնածև, սրածայր, դարչնագույն, թափոտ: Ծիվերի աճող մասը մուգ կարմիր է, միջակ թավոտ:

Տերևները միջակ մեծության են, լայն-նշտարածն, աստիճանաբար սրացած գագաթով, հաստ, փայլուն, մուգ կանաչ, գագաթի մասում ավելի խոր ատամնավոր եզրերով: Աշնանը ոսկեգույն դեղին, լավ լուսավորվածները մոխրագույն:



Ծաղկաբողբոջները խոշոր են, լայն-կոնածև, սրածայր, մուգ դարչնագույն: Ծաղիկները միջակ մեծության են, մեծ մասամբ 7-9 հատ՝ ծաղկաբույլերում: Պսակաթերթիկները կլորավուն են, սպիտակ, հիմքերով միմյանցից հեռու դասավորված:

Պտուղները միջակ մեծության և խոշոր են, 130-270գ քաշով, գաճաճ պատվաստակալների վրա ավելի խոշոր, տափակ կլորավուն, քիչ անհավասարակողմ, խորդուբորդ, յուրահատուկ թմբավոր մակերեսով: Մաշկը հաստ է, մոխրականաչ, գորշ կանաչավուն ու գորշ կետերով ու բծերով, որոնք քլեռներում խտանում և խիտ ժանգի են վերածվում: Պահելու ընթացքում դառնում է բաց դեղին կամ կանաչավուն դեղին, արևի կողմից՝ ոսկեգույն, լավ լուսավորված պտուղներինը համարյա դարչնակարմիր: Պտղամիսը բավական ամուր է, սպիտակ, լավ հասունանալիս շատ թույլ դեղնավուն, շատ նուրբ, հալվող, յուղային, շատ հյութալի, շատ բարձր, հաճելի թույլ թթվությամբ, նուշի դուրեկան բուրմունքով, գերազանց համով: Սակայն պտուղներն ունեն պակաս գրավիչ տեսք:

Ծառերը միջակ աճ ունեն, հողի և կլիմայի նկատմամբ համեմատաբար պահանջուտ են: Պահանջում են տաք, հզոր ու թաքմ հողեր, բավարար ոռոգում, լավ պարարտացում: Զոր հողերում, առանց ոռոգման, պտուղները լավ չեն զարգանում, որակը բարձր չի լինում: Ծառ ծանր, խոնավ ու սառը հողերում նույնպես լավ չեն զարգանում, պահելիս կնճռոտվում են և նորմալ չեն հասունանում: Ցրտահիմացկուն են: Սակայն պահանջուտ են ջերմության նկատմամբ վեգետացիայի ընթացքում: Պտղաբերում են հիմնականում օղանիստերի վրա: Բերքատվությունը հասակավոր ծառերից 150-200կգ և ավելի: Այստեղծվում է բերքատվության պարբերականություն: Սերկևիլի վրա նորմալ աճում են, բայց միջակալ պատվաստման դեպքում ավելի լավ են զգում: Պտուղներն ամուր կպած են պտղաձյուղերին, պտղաբույլերում դասավորված են խիտ, երբեմն 8-10 հատ: Նրանց նորմալ զարգացման համար անհրաժեշտ է կատարել ծաղիկների և նոր կազմակերպված պտուղների նոսրացում: Պտուղները բարձրակ և նորմալ զարգացած են լինում ուշ հավաքելու դեպքում: Հավաքվում են սեպտեմբերի վերջերին, հոկտեմբերի կեսերին: Հասունանում և օգտագործման համար պիտանի են դառնում դեկտեմբերի վերջերիվ, պահվում են մինչև մարտի կեսերը և ավելի: Փոխադրունակ են: Ուշ-ձմեռային, դեսերտային, սեղանի լավագույն սորտերից մեկն է:

ԲԵՐԵ ՆԱՊՈԼԵՈՆ

Ստեղծել է այգեգործ Արկուա Լիարո 1808թ-ին Բելգիայում: Լայն տարածված է Եվրոպայում, հատկապես Յուրտսային Գերմանիայում: Մշակվում է Ղրիմում, Ռուսաստանում, հատկապես Կրասնոդարում: Հայաստանում ամենաշատ ծառերը հանդիպում են Յուրտս-արևելյան, Լոռի-Փանրակի գոտիներում և Սյունիքի մարզում:

Ծառերը միջակից փոքր կամ միջակ մեծության են, բրգաձև կամ անկանոն ու նոսր պսակով: Բունը միջակ հաստության է, գորշ մոխրագույն, անհարթ կեղևով: Միամյա շիվերը միջակ երկարության են, թույլ աղեղնաձև, մոխրադարձնագույն, նոսր ու շատ մանր, ավելի բաց գույնի ոսպնյակներով: Տերևաբողբոջները խոշոր են, թույլ ցցված, սրածայր, կոնաձև:

Տերևները միջակ կամ ավելի խոշոր են, ձվաձև, սրածայր, գազաթը դեպի ցած թեքված, քիչ դեպի վեր ծալված, շատ մանր սղոցատամնավոր եզրերով, հաստ, փայլուն, մուգ կանաչ:

Ծաղկաբողբոջները միջակ մեծության են, կլորավուն-կոնաձև, դարձնագույն, թավոտ:

Ծաղիկները 4-7, մեծ մասամբ 7-ական հատ են ծաղկաբույլերում: Պսակաթերթիկները միջակ մեծության են, ձվաձև, սպիտակ, հիմքում կոթունաձև շատ նեղացած:

Պտուղները միջակ կամ ավելի խոշոր են, հաճախ շատ խոշոր 140-290գ բաշով, զանգակատանձաձև, գազաթի մասում թույլ արտահայտված լայն բլթակներով, մի կողմը տափակավուն, մյուսն ավելի փքված, որից պտուղները քիչ անհավասարակողմ են: Մաշկը հարթ է, փայլուն, բավական բարակ, բաց դեղնականաչ, հետո դառնում է դեղին, արևի կողմից ավելի մուգ դեղին, երբեմն նուրբ շառագունած, ամբողջ մակերեսը պատած է շատ մանր, գորշ կանաչավուն կետերով ու բծերով: Պտղամիտը սպիտակ է, մաշկին մոտիկ գտնվող մասը դեղնավուն, նուրբ, հալվող, շատ հյութալի, բացոր, շատ թույլ թթվությամբ, շատ հաճելի համով, բարձր դեներտային որակով:

Ծառերը երիտասարդ հասակում քիչ զգայուն են սառնամանիքների նկատմամբ: Հասակավոր ծառերը շատ առողջ են, քնափայտը, պտղածյուղերը և ծաղիկները բավական ցրտադիմացուն են, հատկապես տևական վեգետացիա ունեցող վայրերում: Կարիք են զգում տաք, պաշտպանված հողամասերի, որովհետև

պտուղները խոշոր ու ծանր են, շատ ամուր կպած չեն և բամիներից կարող են թափվել: Դանդաղ են աճում, մեծ չափերի չեն հասնում: Սերկևիլի վրա շատ թույլ է աճում, պահանջվում է միջանկյալ պատվաստ: Բերքատվության շրջան է անցնում 5-րդ տարում ու առատ պտղաբերում է, հիմնականում օդանիստերի վրա: Բարձր բերք ստացվում է մեկ տարի ընդմիջումով: Մեկ ծառի բերքատվությունը հասնում է 100-200կգ-ի: Խոնավ վայրերում ծառերն ավելի լավ են աճում ու ավելի բարձր բերք են տալիս: Լավ պտղակալում են, երբ ծաղկման շրջանում տաք է լինում: Բերքը հավաքում են՝ ցածրադիր և տաք շրջաններում՝ օգոստոսի վերջերից մինչև սեպտեմբերի կեսերը, ավելի բարձրադիր վայրերում՝ սեպտեմբերի կեսերից մինչև վերջերը: Պտուղները ձևով և չափով միատարր են, բավական գեղեցիկ, շատ համեղ, փոխադրունակ, բայց մաշկը նուրբ է, պահանջվում է զգուշությամբ հավաքել և դարսել: Կար հավաքելու դեպքում թառամում են, որակն ընկնում է: Պտուղները և ծառերը թոսով չեն հիվանդանում, իսկ տերևները վարակվում են սպիտակ բծավորությամբ: Պտղակերը թույլ է վնասում պտուղներին:

Համարվում է աշնանային լավագույն սորտերից մեկը, իր որակով չի գիջում Բերե Բոսկին:



ԲԵՐԵ ԴԻԼ

Հայտնաբերել է այգեգործ Մորիսը 1811թ-ին Բելգիայում: Տարածված է Ֆրանսիայում, Բելգիայում, Իտալիայում: Մշակվում է Ուկրաինայում, Ղրիմում: Հայաստանում աճում է գերազանցապես Հյուսիս-արևելյան և Լոռի-Փամբակի գոտիների շրջանների այգիներում:

Ծառերը խոշոր են, լայն բրգաձև, քիչ կախվող ու խիտ պսակով: Բունը հաստ է, մուգ մոխրագույն, կլավող կեղևով: Միամյա շիվերը միջակ երկարության ու հաստության են, շատ թույլ աղեղնաձև, մանր, նոսր, սպիտակավուն ոսպնյակներով, թույլ թավոտ:



Տերևները միջակ կամ խոշոր են, երկարավուն ձվաձև, հարթ, քիչ դեպի վեր ծալված, շատ մանրատամնավոր եզրերով, մուգ կանաչ:

Տերևաբողբոջները միջակ կամ խոշոր են, կոնաձև, սրածայր, ցցված:

Ծաղկաբողբոջները միջակ կամ խոշոր են, երկարավուն-կոնաձև, դարձնագույն: Ծաղիկները 4-7, մեծ մասամբ 7 հատ են ծաղկաբույլերում: Պսակաթերթիկները միջակ մեծության են, կլոր, գոգավոր, սպիտակ:

Պտուղները խոշոր են՝ մինչև 200-300գ բաշով, քարենպաստ պայմաններում մինչև մեկ կիլոգրամ, կանոնավոր կարճ տանձաձև, քիչ խորդուբորդ մակերեսով: Մաշկը բարակ է, նուրբ, բավական ամուր, թույլ փայլով, բաց կանաչ, պահելու ընթացքում դառնում է գեղեցիկ դեղնանարնջագույն, արևի կողմից՝ ոսկեգույն, երբեմն էլ շատ թույլ կարմրավուն թշով, հաճելի նշի բուրմունքով: Ամրոջ մակերեսը պատած է ոչ խիտ դասավորված մանր ու խոշոր ժանգակետերով ու ժանգաբծերով: Պտղամիսը սպիտակ է, նուրբ, հալվող կամ կիսահալվող, հյութալի, քաղցր, շատ հաճելի համով և բուրմունքով: Ուշ աշնանային լավագույն սորտերից մեկն է:

Ծառերը ուժեղ աճող են, բավական լավ աճում են նաև սերկևիլի վրա պատվաստված: Երիտասարդ ծառերը ցրտերի նկատմամբ մի քիչ զգայուն են, հետագայում բավական ցրտադիմացկուն են դառնում: Պահանջկոտ չեն հողի նկատմամբ, աճում են բոլոր տեսակի հողերում, բայց լավ են զգում թեթև, թարմ, սննդանյութերով հարուստ, ոչ շատ չոր ու ոչ շատ խոնավ հողերում: Զարբարոտ ու չոր հողերում թույլ են աճում: Բերքատվությունը միջակ կամ բարձր է, մեկ ծառի բերքը հասնում է 100-200կգ-ի: Տերևները զգայուն են, օդի չորությունից և բարձր ջերմաստիճանից այրվածքներ են ստանում: Ծառերը և պտուղները դիմացկուն են հիվանդությունների և վնասատուների նկատմամբ: Ցածրադիր և տաք վայրերում բերքը հավաքում են սեպտեմբերի կեսերից մինչև վերջ, իսկ բարձրադիր վայրերում՝ հոկտեմբերի սկզբներից մինչև կեսերը: Պահվում են մինչև դեկտեմբեր-հունվար: Պտուղները փոխադրումակ են: Անհամապատասխան պայմաններում տոփայ են լինում: